1897 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 (Հոկտ. 6) ՀՈՐԵՔՉԱԲԹԻ

№. 110 ՏԱՆԵԼԻՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№. 110

1897 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24 (Հոկտ. 6) ՀՈՐԵՔՉԱԲԹԻ

# ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

Գրութիւնք բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ՄԻՆՉԵՒ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ը ԳՈՐԾՈՒՆԿՎՈՒՄ Է ՕՏԱՐԳԱՐՈՒԹԻՒՆ

## „БРАТСКАЯ ПОМОЩЬ

ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“

(ԵՎՐՈՊԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ԹՈՒՐՔԻՐԱՀՈՂ ՀԱՅԵՐԻՆ)

Դրական-գիտական ժողովածուի համար, որի տպագրութիւնը վերջանում է։

Ժողովածուն մեծ է և չքեղ 950 երեսից բաղկացած, 160 նկարներով։

Ժողովածուի նմուշները ի ցոյց են հանուած Մոսկվայում, ստորագրուելու տեղերում։

ՕՏԱՐԳԱՐՈՒԹԻՒՆՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է. «Русскія Вѣдомости» լրագրի գրասենեակում, նոյնպէս Կարապանիկովի (Մախովայա) «Дрцтъ» (Дѣтская), «Вѣстникъ Врачебной» և Վոլֆի (Կուզնեցկիյ Մոստ) «Русская Мысль» (Նիկիտսկայա) գրավաճառանոցներում։

Հատորի գինն է 4 ռուբլ., չքեղ թղթի վրայ օրինակների համար բաժանորդագրութիւն այլևս չէ ընդունվում։

Ձանապարհածախսը վերադիր վճարով։

Դիրքը լոյս տեսնելուց յետոյ գինը կբլինի 5 ռուբլի։

Խմբագրութեան հասցէն.—Москва, Зубовскій бул. д. 6, кв. 1.

Ժողովածուի նպատակին համակրող հրատարակութիւններից խնդրվում է արտատպել ներկայ յայտարարութիւնը։

Խմբագիր—Ֆր. ՋԱՆՉԵՆ։

## Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԵԾԱՊԱՏԻՒ Պ. Պ. ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

յայտնում ենք, որ ԵՐԵՒԱՆ քաղաքում բացինք մեր սեփական առևտուր և ընդունում ենք կոմիսիական յանձնարարութիւններ, ապրանքներ ստանալ և ճանապարհել, գնել և վաճառել, ամենայն յարմարութեամբ։ Կարապետ Ս. Թովմասեանց։

Հեռագրական հասցէ.—Երևան Թովմասեանց։ (3—2)

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խաղաղութեան վերջնական բանակցութիւնները։

Նոր բարձրագոյն մանագիտական դպրոցները և Կովկասը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Թագուհի կայսրուհի Մարիա Ֆէօդօրովնա Ս. Էջմիածնից։ Ղարսի նահանգի հունձը։ Լեռնային դպրոց Քազվում։ Գանձակի քաղ. արհեստ. դպրոցը։ Վրաց դպրոցի փակուիլը։ Գանձակի նահանգապետի շրջաբերականը. Ոստիկանական յանդգնութիւնը։ Գանձակից. Երեցփոխի ընտրութիւնը Կուկիայնորաչէն ս. Աստուածածնի եկեղեցում։ Նոր ծրագիր։ Կովկասի լեռնաշղթայով անցնելիք երկաթուղի։ Կ. Պօլսի թերթերից. Դայլեր Վլադիկավկազի շինութիւններում։ Գ. Ազբեսեանցի հեռագիրը։ Օպերային ներկայացումներ։ Նամակ Նուխուց։ Նամակ Ախալքալաքից։ «Մշակ» և «որքեր»։ Ճանապարհորդական նկատողութիւններ։ Մի սև գիծ։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Քրանսիայի ազգաբնակութեան հարցի առթիւ։

ՊԱՐԱԿԱՑՈՒՄՆ.—Նամակ Թաւրիզից։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԽՂՃՂՈՒԹԵՆՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Լրագրների ու հեռագրների վերջին հաղորդած լուրերին նայելով, Աթէնքում խոհեմութիւնը յաղթող է հանդիսացել թեթեամտութեան և անհապաղ ամբոխային գրգռման դէմ։ Ոյն չափաւոր և հեռատես մամուլի ազդեցութիւնն ու կառավարութեան նպատակայարմար դիրքը ի դերև են հանել այն անհեռատես տեղեկութիւնների ու դիւրաբորբոք մամուլի ջանքն ու աշխատանքն, որոնք գործ էին դրվում գրգռելու համար ամբոխը խաղաղութեան նախակարգ պայմանագրի ընդունելութեան դէմ։ Ամբոխի գրգռումն այնտեղ հասել էր Աթէնքում, որ մինչև անգամ պայմանագրի մի օրինակը հանդիսաւոր կերպով հրապարակաւ այրեցաւ։ Ժողովրդի յուզմունքի նպատակն էր ճնշումն գործել նախարարութեան և պատգամաւորաց ժողովի վրայ։ Ինչպէս սովորաբար լինում է, Աթէնքումն էլ ժողովրդեան բորբոքումն մի քանի օրուան ընթացքում տեղի տուեց խոհեմութեան։ Նախարարութիւնը փոխուեցաւ և Զայմիսի կազմած նոր նախարարութեան յաջողեցաւ վերադարձած մարքերը խաղադրելու, ինչպէս պուշակել էին շատ օտար լրագրներ, թէ վերջ ի վերջոյ յունաց կառավարութիւնը կընդունի և պատասուր է ընդունելու պետութեանց որոշումները։ Այժմ հեռագիրը ամսոյս 22-ից Աթէնքից հաղորդում է, որ իշխան Մավրոկորդատօն ուղարկվում է Կ. Պօլիս խաղաղութեան վերջնական պայմանագրի մասին բանակցելու համար։ Խաղաղութեան նախակարգ պայմանների ընդունելութիւնից յետ պէտք է տաճիկ և յոյն կառավարութեանց լիապօրները անմիջապէս բանակցեն խաղաղութեան պայմանագրի մանրամասնութեանց մասին, որով և պէտք է կազմուի խաղաղութեան վերջնական դաշնագիրը։ Ահա այս գործողութեանց համար յունական կառավարութեան կողմից նշանակուել է իշխան Մավրոկորդատօն։ Այս բանակցութիւնն էլ պէտք է վերջնան երկու շաբաթում և ծագած տարակուսութիւնն ու թիւրիմացութիւնն էլ պէտք է ենթարկուին մեծ պետութեանց ներկայացուցիչների որոշման, որ թէ Ծունաստանի և թէ Տաճկաստանի համար պարտաւորական են համաձայն նախակարգ պայմանագրի պահանջին։ Այսպէս խաղաղութեան գործը վերջնանալուն մօտիկ կարելի է համարել։

### ՍՈՒԼԹԱՆԸ ԵՒ ՎԻԼՀԵԼՄ ԿԱՅՍԸՐԸ

«Նովոստի» լրագրի Կ. Պօլսի թղթակիցն ի միջի այլոց գրում է. «Սուլթանը շատ կըցանկանար տեսակցել գերմանական կայսեր հետ, որպէս զի միջոց ունենայ շնորհակալութիւն յայտնելու նրան իւր և տաճիկ ազգի կողմից նրա ցոյց տուած օգնութեան համար։ Եթէ հանգամանքները ներեն, հաւանական է, որ գարնան Սբգուլ-Համիդը իրագործէ իւր վաղուց մտածած ծրագիրը Բերլին երթալու մասին։ Այնքան ներկայումս մեծ է յափշտակութիւնը Գերմանիայի վերաբերմամբ, որ այդ ծրագիրը դիմադրութեան չի հանդիպիլ և սուլթանն անարգել կարող կըլինի երթալ Բերլին—այն միակ քաղաքն, որ կամենում է այցելել։

Ներկայումս սուլթանն ամեն կերպ աշխատում է աւելի և աւելի վառել իւր հպատակների ոգևորութիւնը Գերմանիայի վերաբերութեամբ և պատրաստականութիւն է ցոյց տալիս նպաստելու գերմանացիների տարատեսակ ձեռնարկութեան։ Գերմանացիների ամեն յայտարարութիւն խնդիր արտօնութիւն ստանալու—որևէ ձեռնարկութեան կամ պաշտօնի համար—մեծ սուլթանի կողմից ուշադրութեան արժանացել են և գերմանացիք օգուտ են քաղում այս հանգամանքից, այնպէս որ սուլթանը ստանում է բազմաթիւ խնդիրներ գերմանացիներից, որոնք քնակում են Անգրիայի զանազան մասերում և որոնք ցանկանում են տեղափոխել Տաճկաստան, այստեղ իրանց բազդը փորձելու համար։ Ինչևիցէ ներկայումս Գերմանիայի համար այստեղ ամեն ինչ կատարվում է։

Իսկ ինչ վերաբերում է օսմանեան 6 միլիոն լիրայի նոր փոխառութեան, որի մասին վերջին ժամանակ շատ խօսում էին, բանակցութիւնը նրա մասին դադարեցրած են և այժմ արդունիքում այդ մասին խօսք չէ լինում։

### ՍՈՒԼԹԱՆԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ

«Standard»-ը հաղորդում է, որ Կ. Պօլսում յամառութեամբ լուր է պտըտում, թէ սուլթանը ծանր հիւանդութեան ենթարկուած է։—Կանէայի մահմեդական բնակիչները Կրետէի մահմեդականների կողմից խնդիր են ուղղած Կ. Պօլսի դեսպաններին, խնդրելով, որ խոստ միջոցներ ձեռք առնուն կղզում կարգ և խաղաղութիւն վերականդնելու համար։

### ԿՐԵՏԷ

Դեսպանների վերջին ընդունութեան ժամանակ սուլթանը, ինչպէս հաղորդում է „Berl. Tageb.“ լրագիրը, յայտնեց որ Կրետէից տաճիկ զօրքերի։ Մեկնումն անհնարին է, որովհետև այդպիսի դէպքում մահմեդականներն անպաշտպան կ'մնան։ Յոյն-տաճկական պատերազմին մասնակցող տաճկահպատակ յոյներին ներելու խնդրին վերաբերմամբ տաճկական կառավարութիւնը անորոշ դիրք է բռնած, որովհետև Թեսալիայի զօրաց հրամանատարը երկիւղ է կրում անկարգութիւններից, որոնք կարող են յարուցանել հայրենիքը վերադարձող փախստականները, բայց և այնպէս խնդիրը դեռ ևս քննութեան է։

### ՆՈՐ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ ԵՒ ԿՈՎԿԱՍԸ

Այժմ արդէն ոչ մի կասկած չկայ որ պետութեան մէջ շուտով կըբացուին նոր բարձրագոյն մանագիտական դպրոցներ, որովհետև «Պրավիտ. Վեստն.» պաշտօնական կառավարչական լրագիրը հրատարակեց թէ՝ «կրթական գործոց նախարարը յանձնեց նախարարութեան ուսումնական յանձնաժողովին մշակել ծրագիրը նոր մանագիտական բարձրագոյն դպրոցների, որոնք պիտի բացուին 1898—99 ուսումնական տարու սկզբին»։ Ուրեմն կառավարութիւնը կատարելապէս ըմբռնել է բարձրագոյն նոր դպրոցների պահանջը, որ վճռել է առանց յետաձգելու, մի տարուց յետոյ իսկոյն բանալ նոր դպրոցներ։ Եւ ուրիշ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև շարունակ տպագրուող սատափաիքական տեղեկութիւնները սարսափ էին ազդում ընթերցողի վրայ՝ ցոյց տալով թէ ինչպէս տասնեակ հազարներով մրջնակարգ կրթութիւն ստացած երիտասարդները դուրս էին մնում բարձրագոյն դպրոցներից «տեղ չլինելու» պատճառով։

Ի հարկէ խօսք չէ կարող լինել նոր մանագիտական բարձրագոյն դպրոցներ բանալու մայրաքաղաքներում կամ այն քաղաքներում, ուր արդէն կան այդպիսի դպրոցներ, օրինակ Պետերբուրգում, Մոսկուայում, Խարկովում, Ռիգայում և այլն (համալսարանները չենք հաշվում), այլ պէտք կըլինի բանալ մնացեալ քիչ թէ շատ մեծ և այս կամ այն պետական մասի կենտրոն կազմող քաղաքներում։

Մեզ թվում է որ ամենայարմար ժամանակն է Թիֆլիզին չծուլանալու և կրկին յարուցանելու Թիֆլիզում բացուելիք բարձրագոյն դպրոցի խնդիրը, մանաւանդ որ կառավարութիւնը մինչև այժմ վերջնական մերժումն չէ տուել Թիֆլիզի միջնորդութեանը։

Կովկասում հետզհետէ աւելանում են միջնակարգ դպրոցները, տարեկան մի քանի տարիւր կովկասեցի երիտասարդներ ատարտում են իրանց դասընթացը և հեռանում հայրենիքից՝ ենթարկելով իրանց զանազան պատահականութեանց և երբեմն տարիներով ստասելով այս կամ այն մասնագիտական դպրոցների չէմքերում որպէս զի տեղ բացուի։

Անտարակոյս կլինան, տարութիւնը, անորոշ գրութիւնը, ազգատիկ կեանքը տատութեան մէջ և ուրիշ պայմանները կդծում են այդ երիտասարդների կեանքի ամենալաւ օրերը, նրանց մէջ զարգացնելով անժամանակ յոգնածութիւն, ու տանելութիւն դէպի հասարակական կեանքը։ Միայն այդ չէ, ի հարկէ, սպասելու, փնտրելու և չգտնելու հետևանքը և դրանց մասին խօսելով մենք շատ հեռու կըգնայինք։ Մեր երկրում բարձրագոյն մասնագիտական դպրոցի պահանջը շատ ակներև է, այնքան որ նրա մասին երկարաբանելն աւելորդ է, իսկ այդպիսի դպրոցի տալիք օգուտը վեր է ամեն ներբողից, ուստի մեզ թուում է որ Թիֆլիսի քաղաքային վարչութեան առաջին և ամենագլխաւոր հոգսերից մէկը կլինի անմիջապէս արձագանք տալ կրթական նախարարութեան վճռին և առանց յապաղման միջնորդել որ առաջիկայ ուսումնական տարուանից բացուելիք մասնագիտական դպրոցներից եթէ ոչ մի քանիսը, գէթ մէկը լինի Թիֆլիսում։ Մեզ թուում է որ Կովկասի բոլոր ազգաբնակութիւնն, առանց ազգութեանց և կրօնների խտրութեան պատրաստ է նպաստել իր բոլոր նիւթական և բարոյական ոյժերով, որպէս զի մեր երկրում հիմնուին բարձրագոյն դպրոցներ, որոնց հիմնելն սկզբունքով վճռել է արդէն ինքը կառավարութիւնը։ Ս. Հ.

### ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հաղորդից հեռագրում են «Գովկ». լրագրին, սեպտեմբերի 21-ին. «Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդօրովնա օգոստափառ զաւակների, մեծ իշխան Միքայել Ալեքսանդրովիչի և մեծ իշխանուհի Օլգա Ալեքսանդրովնայի հետ միասին, շքախմբի ուղեկցութեամբ, որ կազմուած էր գեներալ ադիւտանտ իշխան Բարեատինսկուց. Ֆրէյլինա Օգերօվայից ու պալատական բժշկապետ Վելիամինովից—բարեհաճեց այսօր ժամանելով—բարեհաճեց այսօր ժամը 5½ ին։ Ամբոյներից և պինուրական նաւերից սահմանուած ոչխարները արուեց խնդանքներ արձակելով։ Նաւահանգստից գնացին զբօսակիրը։ Մեծ իշխան Նիկոլայ Միխայլովիչ, Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին ու Քուխմայի ու զինուորական նահանգապետ իշխան Ճալիկով և հրաւիրուեցին Բարձրագոյն սեղանին մասնակցելու։ Երեկոյեան նաւահանգստում կանգնած նաւերը և ծովափը լուսաւորուած էին։ Բազմաթիւ ժողովուրդ էր հաւաքուած շքեղ զարդարուած և լուսաւորուած նաւահանգստում։ Նորին Կայսերական Մեծութիւնը կը գիշերէ զբօսակրի վրայ և մեկնումը նշանակուած է երկուշաբթի առաւօտեան ժամն 9½-ին։

***

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են որ սեպտեմբերի 14-ին Խաչվերացի կիւրակի օրը Էջմիածնի տաճարում կատարուեց ս. Միւռոնօրհնութեան սովորական հանդէսը մեծ շուքով։ Ձնայելով տարածուած լուրերին իբր թէ հանդէսը պիտի կատարուէ դուրսը՝ Վեհափառ Հայրապետը հաւանել էր ըստ հին աւանդութեան հայ եկեղեցւոյ հանդէսը կատարել տաճարում, իսկ երեկոյան ժամերգութիւնը տաճարի բակում։ Ուխտաւորների թիւը մեծ էր։

***

Ղարսի նահանգի հունձի մասին տեղական ռուս «Կարս» լրագիրը հետևեալ տեղեկութիւններն է հաղորդում։ Ընդհանրապէս հունձը կարելի է բաւարար համարել, մօտաւորապէս հաշուելով՝ Կաղզուանի շրջանի ազգաբնակութիւնն այս տարի կարող է ստանալ 640 հազար փութ ցորեն, 400 հազար փութ գարի, և ուրիշ հացաբոյսեր—18 հազար փութ, ընդհանուր քանակութիւնը կըլինի 1,058,000 փութ։ Այդ քանակութիւնից հանելով տեղական կարիքների համար պէտք եղած մօտաւորապէս 832 հազար փութ և սերմնացուի համար 190 հազար փութ, աւելորդ կըմնայ 36 հազար փութ, որ և կարող է վաճառքի հանուել։ Այդ աւելորդ քանակութիւնը գլխաւորապէս բաժին է ընկնում Նախիջևանի և Խօրասանի գաւառակներին։ Նոյն հետևանքները կարելի է սպասել նոյնպէս Արտահանի և Օլթու գաւառներում։ Ի հարկէ աւելի յաջող կըլինէր գիւղացոց տնտեսական վիճակը եթէ չլինէին դաշտային մկները, որոնք այժմ մեծ վնաս են պատճառում ազգաբնակութեան, աչնչացնելով արդէն հնձուած և դարսած հասկերը։

***

«Նովոստի» հաղորդում է թէ երկրագործական և պետական կալուածների նախարարութիւնը այս օրերս կըներկայացնի պետական խորհրդին հազվում լեռնային դպրոց բանալու ծրագիրը։

***

Գանձակի քաղաքային արհեստաւորաց դպրոցը ձեռնարկել է մի շատ զեղեցիկ և օգտակար գործ, այն է երկրագործական գործիքներ շինելու, յարմարեցնելով այդ գործիքները (գութաններ, արօրներ և այլն) Գանձակի նահանգի երկրագործական պահանջներին։ Այդ գործն լաւ և կանոնաւոր սկզբնաւորութիւն տալու համար, յիշեալ դպրոցի վարչութիւնը դիմել է Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան՝ խնդրելով տեղեկացնել թէ ինչ տեսակ արօրներ են պէտք գիւղատնտեսներին և ինչ գնով պէտք է վաճառել նրանց, որպէսզի նրանց արժէքը արդէն չլինի նոր արօրների տարածուելուն գիւղական ազատ ժամանակն իսկ ազգաբնակութիւնը դժուար գրութեան մէջ չի ընկնիլ հոգի պակասութեան կողմից՝ մինչև հետևել հունձը։ Այդ դիտումներն ի նկատի ունենալով, պ. Նահանգապետը հնարաւոր չէ համարում միջնորդել բարձրագոյն կառավարութեան գոհացնել իրան յանձնուած Նահանգի ժողովրդեան խնդիրները և առաջարկում է գաւառապետներին գիւղական ժողովների մէջ յայտնել բնակիչներին, որ այսուհետև այս կամ կառավարչական

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ուրբաթ, 14 մայիս.

(Թղթակցությունը «Արձագանքի»)

Մայիսի 9-ին տիրեցին սարի թիկ-
րոց թաղերը, ուսած և բոլոր-
քարեր արմատի և ծառերի տերևներ
ցան յարեցի ապրելքերքին և ծառայել
ցին, որ ամեն մարդ ունենար մի
տերև կամ մի ծաղիկ։ Ամեն մարդ
ուրախ էր, որ գարունը եկավ։ Ամեն
մարդ ուրախ էր, որ ձմեռը անցավ։
Ամեն մարդ ուրախ էր, որ ամեն
ինչ նորոգվում է։ Ամեն մարդ ուրախ
էր, որ ամեն ինչ ծաղկում է։ Ամեն
մարդ ուրախ էր, որ ամեն ինչ
ծիծաղում է։ Ամեն մարդ ուրախ
էր, որ ամեն ինչ երգում է։ Ամեն
մարդ ուրախ էր, որ ամեն ինչ
պարում է։ Ամեն մարդ ուրախ
էր, որ ամեն ինչ սիրում է։ Ամեն
մարդ ուրախ էր, որ ամեն ինչ
սիրվում է։ Ամեն մարդ ուրախ
էր, որ ամեն ինչ կյանք ունի։
Ամեն մարդ ուրախ էր, որ ամեն
ինչ կա։ Ամեն մարդ ուրախ
էր, որ ամեն ինչ կա։

Ամեն մարդ ուրախ էր, որ ամեն
ինչ կա։ Ամեն մարդ ուրախ
էր, որ ամեն ինչ կա։ Ամեն

Հետաքրքիր է տեսնել, թե ինչպես է ներկայացնում Ռուսաստանի ներկայիս դրությունը «Revue des Deux Mondes»-ի հոկտեմբերյան համարում հայտնի ֆրանսիացի հրապարակագիր Վոգյուեն։ Ռուսաստանի ներկայիս դրությունը նա համարում է ոչ միայն ներքին, այլև արտաքին տեսակետից ամենաբարենպաստը։ Ներքին տեսակետից նա գտնում է, որ ռուսական հասարակությունը ներկայումս ամենայն հանգստությամբ է վերաբերվում կառավարության գործողություններին, որովհետև ինքն էլ ամենայն հանգստությամբ է վերաբերվում հասարակության գործողություններին։ Ռուսական հասարակությունը, ասում է Վոգյուեն, ոչ միայն չի ձգտում ինքնուրույն գործել, այլև ամենայն ուրախությամբ ընդունում է կառավարության ամեն մի նախաձեռնությունը

իրենց ունեցած առանց այն էլ չնչին հոդաբաժինը մի քանի ժառանգների մէջ բաժանելուց, շատերը թոյլ չեն տալիս իրենց մէկից աւել երեխայ ունենալու։ Դիւղացոց մէջ այս առթիւ մինչև անգամ այս տեսակ մի առացուածք է կազմուել. «եթէ ազնուականները հնարել են անդրանիկ արու զաւակին, գիւղացիքն էլ հնարել են մէնմիայնակ տղայ զաւակին»։

Բայց սխալ կը լինէր այս դառոզութիւնների վրայ հիմնուած եզրակացնել, թէ ազգաբնակութիւնը որչափ աղքատ է, նոյնքան էլ չբծաւայեաց և ըզկ պչ։ Մի քանի փաստեր վկայում են բոլորովին հակառակը. Բերիլիոնի հեռախուզութիւններից երեւում է, որ Փարիզում 1000 կին մարգուն իւրաքանչիւր տարի ընկնում է

| | | |
|---|---|---|
| Ամենաչքնաղ թաղում. . | 108 | ծննդաբ. |
| Աղքատ | » 95 | » |
| Ունեւոր | » 72 | » |
| Աւելի ունեւոր | » 65 | » |
| Հարուստ | » 53 | » |
| Անպայման հար. | » 34 | » |

Ինչպէս ուզում է թող լինի, այսինքն թէ ծննդաբերութեանց աւելի մեծ տոկոսը է պատճառ կամ հետեւանք աղքատութեան, փաստը այն է, որ աւելի աղքատ են այն ընտանիքները, որոնք ստիպուած են աւելի մեծ թուով երեխաներ կրթելու։ Ենթադրելով որ մանկան խնամատարութիւնը և կրթութիւնը պէտք է մասամբ հասարակ իրաքանչիւր անհատի կառավարութեան վերաբերեալ ունեցած պարտաւորութեանց կատարումն, «Alliance»ը իրեն նպատակ է դրել իրագործելու. 1) ամուրիներին ենթարկել որոշ հարկի, իսկ ամուսնացածներին՝ երեխաների թուի համեմատ (երեքից աւել ունեցողները) բոլորովին ազատել պարտաւորական հարկերից և 2) ժառանգութեան վերաբերեալ օրէնքի փոփոխութիւնը այս հիմունքներով, որ միակ ժառանգը ըստանայ ժառանգութեան միմիայն մի մասը, իսկ մնացեալը անցնէ յոգուտ կառավարութեան։ Բերիլիոնի կարծիքով այս՝ իրօք աւելի քան արդար միջոցներով կարելի է փոքր առ փոքր փոփոխել ազգաբնակութեան վերաբերմունքը դէպ պակի և ընտանիքի անհրաժեշտութեան խնդիրը։ Մարդիկ, որոնք այժմ նիւթական պատճառներից կին կամ ընտանիք չունին, այն ժամանակ այլ ևս պատճառ չեն ունենալ զերծ կենալ իրենց ընտանեկան օջախի քաղցրութիւնից, որի հետեւանքը և կըլինի ազգաբնակութեան աճումն։

Թարգ. Ե. Ջանումեան։

(Վերջը հետեւել համարում։)

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԹԱՒՐԻԶ, սեպտեմբ. 10
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Օգոստոս 24-ին զինուորներով շրջապատուած քաղաք եկան մօտ 350 հայ գաղթականներ, որոնք իջեւանեցին հայոց գերեզմանատունը։ Զինուորները ճանապարհին շատ են չարչարել խեղճերին։

Այստեղ այդ գաղթականներից շատերին բաժանեցին հայոց տները (ծառայութեան համար), իսկ մնացածներն անցեալ կիւրակի Տէր Մկրտիչ աւագ քահանան տարաւ մօտակայ գիւղերը։ Արծաթ դրամ շատ սակաւ է գտնւում, որովհետև Թէհրանում «Մարրաֆխանան» (փող կրելու տունը) փակուել է. առևտուրը համարեա թէ դադարել է։

Մարազայում խռովութիւններ են տեղի ունեցել, բայց չուտով հանդարտուել են։

Արդէն Թաւրիզի երկաթ դպրոցները բացուել են, բացի Բերդաձորի օրիորդաց դպրոցից, որի վարժուհին դեռ ևս չէ եկել։

Բազրատունի։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏՇՁԿՍՏԱՆ և ՅՈՒՆԱՍՏԱՆ. — Times-ի Կ. Պօլսի թղթակիցը հաղորդում է, որ ռահկական նախարարութեան մի քանի անդամները կարծիք են յայտնում, որ որքան կարելի է չուտով Թեսալիայից ռազմիկ զօրքերն արձակուին և յետ քաշուին այդ նահանգից. իսկ այլը այն կարծիքն են յայտնում, թէ նախակարգ պայմանագրի զօրութեամբ Թեսալիայից տասիկ զօրքերի մեկնումն մի ամսից առաջ, երբ յունական պատգամաւորաց ժողովը կ'ընդունէ եւրոպայի վերջին որոշումը, ուղղակի արգիլուում է (VI-րդ յօդուածի բնորոշ տառական բացատրութիւն)։ Ինքը սուլթանը ժամանակից առաջ տասիկ զօրքերի թեսալիայից մեկնելուն հակառակ է, երկիւղ կրելով իւր մահմեդական հպատակների զբաղոհութիւնից։ Վերջապէս Կ. Պօլսի լրագրներին թէև թոյլ է տուած քննադատելու նախակարգ պայմանագիրը, բայց խստիւ արգիլուած է Թեսալիայից տասիկ զօրքերի մեկնելու խնդիրը չօշափելու։

ՅՈՒՆԱՍՏԱՆ և ՊԵՏՈՒԹԻՒՆՔ.— Ս.-Պետերբուրգից օտար լրագրներին հաղորդում են, թէ «Յունաստանի դժգոհութեանց առթիւ ռուսաց կառավարութիւնը յայտնել է, որ եւրոպական ներկայնակութիւնը իւր ստանձնած յանձնարարութիւնը կատարած, վերջացրած է համարում, և որ ապագայ որոշումների համար, որ կրկայացնէ յոյն կառավարութիւնը, արդէն պատասխանատուն և հրաշխատուրն ինքը կըլինի։

„Köln. Zeit.“ը կիսապաշտօնական յօդուածում ասում է.

Մի քանի օտար լրագրներում յայտարարում են, որ այսուհետև յոյն-տաճկական խաղաղութեան դաշնագիրը կախուած է յոյն կառավարութեան հաստատութիւնից։ Այս հայեցուածքը հիմնաւոր չէ։ Երբ Յունաստանը տաճկաց յայտնութիւններից ընկճուած դարձաւ պետութեանց միջնորդութեան, Կ. Պօլսի դեսպանները տարց դարձեցրին թէ արդեօք հարկ է առաջ Տաճկաստանի հետ համաձայնութիւն կայացնել և ապա բանակցութիւն սկսել Յունաստանի հետ, թէ յոյն ծանուցագիրը, որով Յունաստանը «ամենապաշտօնական կերպով» իւր չահերի պաշտպանութիւնը յանձնեց պետութեանց, համարել վկայութեամբ, որով Յունաստանը պատասուրւում է ընդունելու պետութեանց մշակած խաղաղութեան պայմանները։ Վերջին հայեցուածքը օրինաւոր համարուեցաւ։ Պետութիւնք գործում էին իրրև Յունաստանի լիազորներ. ուստի և Յունաստանը չունի իրաւունք ոչ մերժելու, ոչ էլ ձևափոխելու կայացրած պայմանագիրը։ Յունական սահմանադրութեան համաձայն, հարկ է լսել պատգամաւորաց ժողովի կարծիքը պայմանագրի մասին, որ օրէնքի ոյժ կրստանայ պատգամաւորաց ժողովի քուէարկութիւնից յետոյ. բայց այս Յունաստանի լոկ ներքին տնային գործ է։

ՅՈՒՆԱՍՏԱՆ.—„Pester Lloyd“ը հաւակրութեամբ յիշում է կոմս Մուրավիվի խօսքերը թէ՝ «Մեծ պետութիւնը ներկայումս իրանց ստանձնած պարտականութիւնը կատարել, վերջացրել են և Յունաստանի ապագայ գործառնութեանց պատասխանատուութիւնը կընկնի իրան Յունաստանի վրայ։

Նոյն հայեցուածքը պարզապէս արտայայտուած է խաղաղութեան պայմանագրի մէջ, որի վերջին յօդուածում ասած է թէ պայմանագիրը կըծանուցանուի Սէյէնքում և իսկոյն կըգործադրուի։

Յունաստանն իւր չահերի պաշտպանութեան հոգսը յանձնեց մեծ պետութեանց և նորա չատ ջանք ու ժամանակ վատնեցին ներկայ տարւոյս սեպտեմբերի 6 ի (18-ի) խաղաղութեան պայմանագիրը կազմելու համար, որ Յունաստանը պարտական է ընդունել։

Այս պայմանագիրը իրան վայելուչ տեղը կըբռնէ եւրոպական իրաւանց պատմութեան էջերում, մինչև անգամ եթէ Յունաստանի պատգամաւորաց ժողովը, լծկանամտութեամբ կամ յուսահատութեամբ, հրաժարուի նրան ընդունելու։ Այսպիսի գործողութեանց հետեւանքը կըլինի պատերազմի նորումն և չարունակութիւնը, որ մահարեր է Յունաստանի համար, և որ արդէն մի անգամ պատճառ եղաւ գրեթէ յունական թագաւորութեան անկման։ Սէյէնքի փողոցային առնարանները մեծ ճարտարութեամբ քարոզում են պատերազմ, բայց դիւանագէտ անձինք պէտք է հասկանան, որ այդպիսի ժողորութիւնք անիրագործելի են։ Եւրոպայի համար շատ պարզ է, որ Յունաստանն անկարող է պատերազմ մղել որևէ պետութեան դէմ։ Նրան մնում է փորձ փորձել անմիջապէս Տաճկաստանի հետ բանակցելու, որ վերջինս սիրով յանձն կառնի։ Բայց Յունաստանը պէտք է մտածէ, որ անմիջական բանակցութիւնը իւր թշնամու հետ չեն կարող այն շահաւէտ պայմաններով վերջանալ, որոնք մշակել են մեծ պետութիւնք։

Բայց կարելի է ստուգապէս դուշակել, որ դործը յաջող վերջ կունենայ, Սէյէնցիք ազազակ և աղմուկ կըբարձրացնեն մի քանի օր միայն, իսկ յետոյ կառավարութիւնն ու պատգամաւորաց ժողովը կըվարուեն այնպէս, ինչպէս վարուել կըպահանջեն երկրի շահերը, այն է կընդունեն պայմանագիրն առանց որ և է փոփոխութեան և կ'ենթարկուին նրա բոլոր պահանջներին։

Կ. Պօլսի վերջին բանակցութեանց ժամանակ անգլիական կառավարութիւնը աշխատում էր համոզել միւս պետութեանց որ երաշխաւոր լինին Յունաստանի նոր փոխառութեան համար, որ կարևոր է պատերազմական տուգանքը վճարելու համար։ Համոզուելով, որ ոչ Գերմանիան, ոչ Աւստրիան և ոչ էլ Իտալիան հաւան չեն այդ առաջարկութեան, Անգլիան դիմեց Ռուսաստանին և Ֆրանսիային, բայց սորա էլ մերժեցին առաջարկութիւնը։

Այս հանգամանքն ի նկատի ունենալով, Անգլիան պէտք է ձեռնթափ լինի նոյնանման փորձերից, որովհետև Գերմանիան վճռապէս հրաժարւում է որևէ դրամական երաշխաւորութիւն ստանձնելու Յունաստանի համար։

„Le Nord“ը 24 ից սեպտեմբ., փոքրիկ նկատողութիւն է անում առիթով. «Յուզմունքը, որ տիրել է Սէյէնքում խաղաղութեան նախակարգ պայմանագրի յայտնելից յետ, շատ հասկանալի է և Եւրոպան այլ ինչ սպասել էլ չի կարող։ Բայց վստահաբար կարելի է ասել որ ընդհանուր եւրոպական խաղաղութիւնը չէ կարող դրանից վտանգուել։ Բայց և այնպէս շատ ցաւալի կըլինէր, եթէ յոյն կառավարութիւնը կամ պատգամաւորաց ժողովը, ազգային չարժումից դրդած, հրաժարուէր ենթարկուելու խաղաղութեան պայմանագրի պահանջներին։ Այն ժամանակ աչինչ չէր կարող արգելք լինել Տաճկաստանին Սէյէնքը մտնելու և վերջ դնելու յունաց թագաւորութեան, որին Եւրոպան այլ ևս չի ցանկանալ օգնութեան ձեռք կարկառել։

ՏՇՁԿՍՏԱՆ.—Կ. Պօլսից Pol. Corr. լրագրին հաղորդում են, որ Արդուլ Համիդը իտալական դեսպան պ. Պանզային հրաժեշտի ընդունելութեան ժամանակ յայտնել է սըրտանց գոհունակութիւն այն որոշմանց համար, որոնք մեծ պետութիւնը կայացրել են խաղաղութեան նախակարգ պայմանագիրը գլուխ բերելու համար։ Ուր այս նա աւելացրեց, թէ «անչուշտ մեծ պետութիւնը ի նկատի կ'առնուն իւր չափաւորութիւնն ու զիջողականութիւնը բանակցութեանց ժամանակ և կըվարձատրեն նրան (սուլթանին)՝ կրետական խնդրում մեծամեծ զիջումներ չպահանջելով»։ Պ. Պանզան պատասխանում է. հաւանական է, որ կրետական խնդիրը պիտի վերջանայ կղզուն ինքնավարութիւն տալով ինչպէս համաձայնութիւն կայացած է այդ մասին մեծ պետութեանց և Դրան մէջ։ Սուլթանն իսկոյն խօսակցութեան առարկան փոխում է, հասկացնելով, որ ինքը կրետական խնդիրը դեռ ևս իւր որոշումից հեռու է համարում։

Times ի Կ. Պօլսի թղթակցի հաղորդած լուրը հաստատում է, որ Օսմանեան բանկը դիտաւորութիւն ունի նշանաւոր գումար տալու Դրան իբրև առհաւատչեայ պատերազմական տուգանքի վճարման։ Այս լուրը Կ. Պօլսում լաւ տպաւորութիւն է արել։ Սիր Էդգար Վինցէնտը գնաց Բերլին որպէսզի հաւաստիանայ, թէ Յունաստանի զերմանացի պարտատէրերը նրանից որպիսի պահանջներ անելու մտադրութիւն ունին։

ԵԳԻՊՏՈՍ. — Politique Coloniale լրագրին Ս.-Պետերբուրգից հաղորդում են, որ Փարիզի, Վիեննայի, Պետերբուրգի, Հռոմի և Կ. Պօլսի կաւավարութեանց մէջ կարծիքների փոխանակութիւնք են տեսի ունեցել եպիպտական խնդրի վերաբերմամբ։ Իբրև լծէ Թուրը շուտով կ'ուղղէ պետութեանց դիւանագիտական ծանուցագիր, որով կըպահանջէ Եգիպտոսից անգլիական զօրքերի հեռանալը։ Ապա Ռուսաստանն իւր կողմից կըպաշտպանէ ծանուցագրի այդ պահանջը։ Պետութեանց այդ ջանքերի գլխաւոր նպատակը կըլինի դեսպանաժողով կայացնել Կ. Պօլսում կամ Ս. Պետերբուրգում։

Ժամանակատոր խմբագիր՝
Գ. ՍԻՄԷՕՆՅԱՆՑ
Հրատարակիչ՝
ԱՐՏԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՌՔԵՐԻ ԵՐԹԵՒԿՈՒԹԻՒՆԸ
Վրաց պատերազմական ճանապարհով.

Մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը

Թիֆլիզից՝ — հինգ տեսք ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 8 ժամին (գիշերելով Մլեթի կայարանում) և 10 ժամին (գիշերելով Պասանաուր կայարանում) և հասնում են Վլադիկավկազ միւս օրը, երեկոյեան 7 ժամին և 9 ժամին 10 րոպէին։ Վեց տեսք ունեցող օմնիբուսները Թիֆլիզից դուրս են գընում առաւօտեան 7 ժամին և 3 ժամին կէսօրից յետոյ և առանց գիշերելու ճանապարհին հասնում են Վլադիկավկազ միւս օրը առաւօտեան 9 ժամին և երեկոյեան 5 ժամին 20 րոպէին։

Վլադիկավկազից հինգ տեսք ունեցող կառքերը դուրս են գնում առաւօտեան 7 ժամին (գիշերելով Մլեթի կայարանում) և 9 ժամին Դուշաուրում) հասնում են Թիֆլիզ միւս օրը երեկոյեան 7 ժամ 25 րոպ. և 8 ժամ 15 րոպէին։ Վեց տեսք ունեցող օմնիբուսները Վլադիկավկազից դուզս են գնում առաւօտեան 8 ժամին և երեկոյեան 7 ժամին և հասնում են Թիֆլիզ միւս օրը առաւօտեան 8 ժամին 15 րոպէին և երեկոյեան 8 ժամին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՄՆԱԻՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵՒԱՆԻ
(Կուկիա, Չօրօնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են առ ն օր, բացի կիւրակի օրերից.
Ա Ռ Ա Ւ Օ Տ Ն Ե Ր Ը
Կ. Մ. ՀԻՒՕՒԱՆԻ—9 –10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԹՈՒՐՆՈՎՈ—10½ —11½ ժ. կանանց և երեխայոց հա.։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ.—11½—12 ժ. կանանց և երեխայոց հ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՀ—12—1 ժ. ականջի, կոկորդի. քթի և կրծքի հ.
Ա. Ն. ՉՊԱԿՈՎԻ—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), վէներական և մորթի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ.—1½—2½ ժ. ներքին և միզասեռական հ.
Ե Ր Ե Կ Ո Ն Ե Ր Ը՝
Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. ներքին և նեարդային հ.
Տ. Ի. ԲՈՒԴՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խիի, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. հիւանդները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Ի տեղի հիւանդանոցի վերատեսչի՝
Բժ. Ա. Գ. ԳՈՒՐԿՕ։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի ԵՐԻՏԱՍԱՐԴ Կանդիդատ ԺՐՆԵԻԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ, կամենում է դասեր տալ Փրանսերէն լեզուի։ Հասցէն Южные номера, № 15, առաւօտեան ժամը 9—11.
(5—3)

ԹԻՓԼԻՋԻ ԴՐԱՎԱՃԱՐՆԵՐԻ ՄՕՏ ԿՐԵԼԻ Է ՁԵՌՔ ԲԵՐԵԼ
Քամալեանց Ս.-ի գրքոյկները
Ծովինար . . . . . 20 կ.
Խարազի տղայ . . . . . 40 »
Շէն թագաւորի աղջիկ . . . 25 »
Անմեռ աշխարք . . . . . 8 »
Հէքեաթներ . . . . . 30 »
Խալ Խաչիկ . . . . . 25 »
Գալօ ափօ . . . . . 10 »
Աստուած աղքատի կերպում . 20 »
Աստուած չճանաչող . . . . 10 »
Եղկսիրութիւններ ա. կապակ 40 »
Հեղինակի հասցէն՝ «Արձագանք»-ի խմբագրատուն։

ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՐԱՆՈՑԻՄ
ստացուած են և վաճառւում են հետեւեալ նոր գրքերը. ա. կ.
Արծրունի բժշկապետ Վ. Ծանապետ Վ. 1897 թ. գինն է. . . . — 20
Բարխուդարեանց Գ. Քանաստեղծութիւններ. Թ. 1897 գինն է. . — 1 —
Գալֆայեան, Պատմութիւն նոր կտակարանի 1897 թ. գինն է. . — 50
» Նոյն Հին կտակարանի, Վ. 1897 թ. գինն է. . . . 1 —
Խալաթեան Գր. պրոֆ. Ս. և Բ. Մնացորդաց գրքերի հայ թարգմանութիւնը Վ. 1897 թ. գինն է. . . . . — 15
Կարապ. վարդ. Երուսաղէմի Յովհաննէս եպիսկոպոսի Թուղթը առ Աբաս Աղուանից կաթուղիկոս, Վ. 1896 թ. գինն է. . . . — 15
» Յովհաննու իմաստասերի հայոց կաթուղիկոսի խոստովանութիւն անչարժ յուսոյ մարմնացելոյ բանին Քրիստոսի և ընդդէմ դաւանողաց զմի Քրիստոս յերկուս բնութիւնս, Վ. 1896 թ. գինն է. . . . — 15
Կոստանեանց Կ. Համամ, արևելքի, Վ. 1896 թ. գինն է. . . — 20
» Տէր Պետրոս Ա. գետադարձ, Վ. 1897 թ. գինն է. . — 10
Թ. Նեռոլդէքէ, Պատմութիւն Սասանեան տէրութեան, Վ. 1896 գ. . — 30
Տէր - Մովսեսեան Մ. Վ., Սոկրատայ պատմութիւն եկեղեցական և վարք Սրբոյն Սեղբեստրոսի, Վ. 1897 թ. գինն է. . . . — 60
» Սոկրատայ Սքոլաստիկոսի եկեղեցական պատմութիւն, Վ. 1897 թ. գինն է. . . . 2 —
Տէր - Միքելեան Ա., Սրբոյ հրոն մերոյ երանելի Գրիգորի Լուսաւորչի յաճախապատում ճառք լուսաւորք Վ., 1896 թ. գինն է. . . 1 —
Տէր - Մկրտչեան Գ., Ագաթանգեղոսի աղբիւրներից յիշատակ դատակնքած Դոքիս և Ժամի վկայից որ վկայեցին, յուսոյ, Վ. 1896 թուի գինն է. . . . — 50
Տէր - Աւետիքեան Սա., Ղևկավարներ գ. ա. I կապ քանդը II մեր Տէրը Թ., 1897 թ. . . . — 9
Մամուլի տան է և չուտով լոյս կըտեսնի նոյն Տէր - Աւետիքեան «Սամիտարեան» վէպիկը (10—10)

Պ. ՄՈՒՐՏԱԳԸ այս օրերս կըսկի ԸՆԴԼԻՔԵՐԻՆ ԼԵԶՈՒԻ լժանագին դասերը, իւր բնակարանում, որ գտնվում Մադաթովսկայա փողոցում, պ. Մարտիրոսեանցի տանը։ Կարելի է տեսնել ցերեկուան ժամը 3 ին։ (10—8)

ԹԻՓԼԻՋԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ հրատարակում է իւ կիտութիւն ընդհանրութեան, թէ կառավարութեան թոյլտուութեամբ Ընկերութիւնը 14 և 25 տարով փոխառութիւն տալուց անկախ, տալիս է փոխառութիւն նաև 36 ՏԱՐՈՎ ԵՒ 4 ՏՈՄՈՎ, վերցնելով ընդամէնը տարեկան 6½% սկզբնական դրամագլխի գումարից։
(5—3)

Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie“

Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն
„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.“
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կըլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և
ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱԳԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՒՆԻ ԵՒ Կ. ՊՕԼՍԻ ՎՐԱՑՈՎ
Մեկնում է հաճումից չորեքշաբթի, հոկտեմբ. 1/13 ՍԻՐԿԱՍՍԻՍ չոգենաւը նաւապետ է ԳԱՐՐԻԳ,
և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին
Հաճումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակները, գինը սովորականից պակաս է լինում։
Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւնները ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին
Հաճումում.—Վիկտոր դ'Ընտրին, Նաբերեժնայա։
Թիֆլիզում.—Գ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարայ։
Բաթում.—Գ. Ս. Դիլղարեանին, Գալիբեակինի հրապարակ։
Նովօրօսիյսկում.—պ. Մելխիօր Հերշինզոնին։ (20—9)

ԱԻՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
Տէր-Յովհաննէսեան
(Սօլօլակ, Սագովայա փողոց, տուն № 46, Տէր-Մելիքսէթեանի)
Աշակերտների ընդունելութիւնն սկսվում է օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից։ (15—15)

Дозволено цензурою, Тифлисъ 23-го Сентября 1897 года.

Տպարան Մնացականի Մարտիրոսեանցի։

Типографія М. Мартиросянца. На Михайловской ул. № 81.